

Էդ. Աղայան

ԱՂՎԱՆԻՑ ԱՄՍԱՆՈՒՆՆԵՐԸ

Անանիա Շիրակացու աշխատությունների մեջ տրված են բազմաթիվ ժողովուրդների ամսանունները, այդ թվում նաև Աղվանից ամսանունները¹ Առայժմ մի կողմ թողնելով այլևս ժողովուրդների ամսանունները, որոնց ուսումնասիրությունն անշուշտ մեծ հետաքրքրություն կներկայացնի, մենք փորձում ենք քննել Աղվանից ամսանունները՝ լեզվաբանական տեսակետից: Այդ բանը կարևոր է նրանով, որ Աղվանից լեզվից մեզ զրեթե ոչինչ չի հասել. մենք ուղղակի անտեղյակ ենք այդ լեզվի կառուցվածքին, քերականությանը, ընդհանուր սխտեմին և բառապաշարին: Ուստի և այդ ամսանունները կարելի է դիտել իբրև թանկարժեք ֆնացորդներ՝ Աղվանից լեզվի մեզ անծանոթ բառապաշարից, և նրանց բացատրությունն ու իմաստի ճշտորոշումը դիտական մեծ արժեք են ներկայացնում:

Շիրակացու հեղինակությանը, ըստ պրոֆ. Ա. Արրահամյանի, Աղվանից ամսանունների ցանկը մեզ հասել է ՀՍՍՌ Մատենադարանի № 5 1999 և 1973 ձեռագրերում: Երկու ձեռագրերում տրված այդ ցանկերն են.

Ձեռագիր № 1999

Նաւասարդոն

Տոււն

Նամոց

Շիւի

Բոկաւոն

Մարէ

Բոճկոնէ

Ծախուլն

Բունդոկէ

Որելին

Եխնեա

Քարնեա

Աւելեացն

Ձեռագիր № 1973

Նաւասարդուն

Տոււն

Կամոց

Ցիւէ

Բոկաւոն

Բիճուկէն

Մրելի

Ծախուլի

Բունդուկէ

Որելին

Եխնա

Քիրնա

Աւելիք

Առաջին և վերջին ամսանունները՝ Նաւասարդոն (-ուն), Աւելեացն (Աւելիք) նույն են հայկական ամսանունների հետ և, այս դեպքում, որևէ արժեք չեն ներկայացնում: Մնացյալ ամսանունները՝ երկու ցանկերում, հաճախ զգալիորեն տարբերվում են, և որոշելու համար, թե այդ տարբեր գրչություններից որն է ճիշտ, պետք էր, իհարկե, իմանալ աղվանից լեզուն: Բայց այդ, դո՛ւն առայժմ, անկարելի բան է: Մնում է, ուրեմն, որ որևէ միջոցով պարզենք այդ անունների բառային ձևն ու նշանակությունը և այդ միջոցով որոշենք, թե տարբեր գրչություններից որն է ճիշտ:

Հայանի է, որ ամսանունները, ինչպես և առհասարակ բոլոր անուն-

¹ Գր-Ֆ. Ա. Արրահամյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1946 թ., էջ 118:

ները, նախապես ունեցել են բառային իմաստ, կամ ավելի ճիշտ՝ եղել են սովորական բառեր, և հետագայում միայն, ժամանակի ընթացքում զրկվելով բառային զորածուծությունից և գործածվելով միայն իբրև անուն՝ կորցրել են իրենց բառային իմաստն ու դարձել մեզ համար՝ հաճախ անմեկնելի, բառային իմաստից զուրկ անուններ: Հայտնի է նաև, որ ամսանունները գանազան ժողովուրդների մոտ ստացված են ըստ մեծի մասին՝

ա) Ամիսների հաջորդական թվարկումով, ինչպես՝ լատ. september (<septem «յոթն»), october (<octo «ութ»), november (<novem «ինն»), december (<decem «տասն»), հայ. Սահմի (<վրաց. Sami «երեք»), Հոռի (<վրաց. Ori «երկու») և այլն:

բ) Տվյալ ամսվան հատուկ՝ բնության և կյանքի հետ կապված գանազան երևույթներից, ինչպես՝ հայ. Քաղոց (<քաղ խառնք անասնոց):

գ) Նշանավոր թագավորների կամ դիցաբանական հերոսների անուններից, ինչպես լատ. Julius «Հուլիոս», Augustus «Օգոստոս» և այլն:

Աղվաններն էլ անշուշտ այդ միջոցներով պետք է կոչած լինեն ամսանունները. ուստի և մեզ հարկավոր է իմանալ, թե վերոհիշյալ ցանկերում թվարկված ամսանունները չունեն արդյոք այդպիսի իմաստներ: Այդ բանի համար միակ հնարավոր միջոցն էր՝ դիմել ցեղակից ենթադրված ուտիերենին, լեզու. որ այժմ էլ կենդանի է և խոսվում է Լեռնային Ղարաբաղի մի քանի գյուղերում: Այդ նպատակով էլ, ահա, մենք դիմեցինք ուտիացի և հմուտ ուտիագետ ընկ. Քուլմանյանի օգնությանը և մեկ առ մեկ կարդալով այդ ամսանունները՝ խնդրեցինք բացատրել, թե իրանք ուտիերեն որևէ բան նշանակում են արդյոք: Ըստ նրա տված միանգամայն վստահելի բացատրությունների, մի քանի ամսանուններ շատ հավանական մեկնաբանություն են ստանում: Դրանք են. երկրորդ ամիսը՝ Տուլսն կամ տուեն. առաջին ձևը կազմված է Տուլ արմատից, որ նշանակում է «խաղող». նույն արմատը գործածվում է նաև հայերենում տալի ձևով և նշանակում է «խաղողի որթ». -են համապատասխանում է հայ. գործիական հոլովի -ով մասնիկին «ունեցող» նշանակությամբ (օր. շնորհքով): Հետևաբար Տուլսն կարելի է թարգմանել «խաղողով», խաղող ունեցող, խաղողաբեր» ամիս, և անշուշտ այդպես կոչվել է այն ամիսը, երբ հասնում է խաղողը: Ըստ այսմ, նույն ամսանվան երկրորդ ձևը՝ Տուեն, որ ըստ ընկ. Քուլմանյանի, ուտիերենում չկա, պարզապես պետք է համարել սխալագրություն:

Չորրորդ ամսանունը՝ Շիլի ըստ № 1999 ձեռագրի և Յիլե ըստ № 1973-ի: Առաջին ձևն անծանոթ է ուտիագետին. երկրորդը կազմված է ցիլ «ցեղ», տոհմ, սերմ» բառից (օր. Վարդաշենում՝ շիկամունցիլ «սոխի սերմ»). -ե սեռականի վերջավորությունն է. հետևաբար ամսանունն այդ ձևով նշանակում է «սերմի, սերմանելու» ամիս և արված է կամ աշնան կամ գարնան ամիսներից մեկին, երբ կատարվում է ցանքը. ավելի հավանական է աշնան, եթե նկատի ունենանք, որ նոր տարին սկսվել է ամռանը (տես ստորև), իսկ Յիլե չորրորդ ամսվա անունն է:

Հինգերորդ ամսանունը, որ երկու ձեռագրերում էլ ունի նույն Բեխուլոն ձևը, կազմված է բոլ «վառ» արմատից և աւոն «ող» մասնիկից. այդ ձևով (բոկաւոն) գործածվում է ուտիերենում և նշանակում է «այրեցող»: Նույնպես հավանական է իբրև ամսանուն, ամառվա շոգ ամիսներից մեկի համար (հմտ. հայ. Հրոտից):

Տասնևմեկերորդ ամսանունը՝ Միսնեա ըստ № 1999 ձեռագրի և Նիմա ըստ № 1973-ի: Երկրորդ ձևը կաղմված է եխ «հունձ» արմատից, հոգնակի սեռականի -նա մասնիկով և թարգմանվում է հնձոց. միանգամայն հարմար է իբրև ամսանուն, և տրվել է անշուշտ ամառն այն ամսվան, երբ կատարվում է հունձը: Իմաստի համար կարելի է համեմատել հայերեն հունձ բառը, որ նշանակում է նաև «ամառն»: Առաջին ձևը սխալադրություն է. թվում է, թե հայ գրչագիրը հայացրել է Նիմա ձևը՝ դարձնելով Նիսնեա:

Տասնևերկուերորդ ամսանունը՝ Խաբնեա ըստ № 1999 ձեռագրի և Խիբնա ըստ 1973-ի: Մեկնարանվում է երկրորդ ձևը, որ կաղմված է խիբ «երեք» բառից՝ հզն. սեռական հոլովի -նա մասնիկով (հմտ. նախորդը). ամբողջն այդ ձևով թարգմանվում է «երեք», որ իբր ամսանուն ըստ իմաստի համապատասխանում է հայ. Սահմի ամսանվան: Առաջին ձևը սխալադրություն է՝ նախորդի նման:

Մնացյալ ամսանուններից թերևս հավանական կարելի է համարել երրորդ ամսանունը, որ միանգամայն տարբեր ձևեր ունի երկու ցանկերում. ըստ № 1999-ի՝ Նաւոց, ըստ № 1973-ի՝ Լաւոց. հարգելի ուտիագետին անծանոթ է կաւոց բառը. առաջին ձևը՝ Նաւոց, ստուգաբանում է նամ «խոնավ» (իբր փոխառություն պարսկերենից) և -ոց -ոնց իբր սեռականի վերջավորություն. ըստ այդմ ամբողջը պետք է նշանակեր «խոնավության» ամիս և պետք է տրված լիներ աշնան կամ գարնան անձրևային ամիսներից մեկին. ստուգաբանությունն անշուշտ անհավանական չէ, եթե ընդունենք, որ աղվաներենում գործածվել է պրսկ. նամ «խոնավ» բառը:

Անստույգ են մնում հետևյալ հինգ ամիսները. վեցերորդը՝ Մաբե ըստ № 1999-ի և Բինուկե ըստ № 1973-ի. յոթներորդը՝ Բոնկոնե ըստ № 1999-ի և Մրելի ըստ № 1973-ի. ութերորդը՝ Մախուլե || Մախուլի. իններորդը՝ Բոնդուկե || Բոնդուկե և տասներորդը՝ Որելի: Վեցերորդի և յոթներորդի տեղը երկու ցանկերի մեջ շրջված է. ըստ № 1999-ի վեցերորդն է Մաբե, որին, թեև ձևի որոշ տարբերությամբ, համապատասխանում է № 1973-ի յոթներորդը՝ Մրելի-ն, իսկ վեցերորդն է՝ Բոնկոնե, որին համապատասխանում է № 1973-ի վեցերորդը՝ Բինուկեն: Թե երկու ցանկերի տված տարբեր կարգերից որն է ճիշտ, դժվար է վերջնականապես վճռել, բայց երկու ձեռագրերի համեմատությունն այս դեպքում որոշ նարազություն տալիս է գտնելու գոնե հավանականը: Վերևի ստուգաբանությունների հիմտն վրա անվերապահորեն կարող ենք ասել, որ երկու ձեռագրերից ավելի վրատահելին է № 1973-ը: Այսպես՝ ստուգաբանված հինգ (վեցերորդը՝ վերապահությամբ) ամսանուններից չորսը ճիշտ ձևով են տրված № 1973 ձեռագրում. միայն մեկը (Տուլեն || տուեն), ընդհակառակն, ճիշտ է № 1999-ում, և սխալ՝ № 1973-ում, որտեղ տրված Տուեն ձևում դրիչը պարզապես բաց է թողել | հնչյունը անուշադրությամբ: Նշանակում է, վատահելի պետք է

¹ Ի դեպ, այն հանգամանքը, որ լավ համարված ձեռագիրն էլ սխալներ ունի, իսկ ավելի «անվստահելին» կարող է երբեմն ավելի ճիշտ ձևեր պահած լինել, ցույց է տալիս. թե երբեք չի կարելի ընտրել մի ձեռագիր իբր լավագույն, կուրբեն հետևել նրան, իսկ մյուս ձեռագրերի տարբերությունները միշտ նշել ծանոթությունների մեջ՝ առանց այդ տարբերությունների արժեքը որոշելու, ինչպես անում են ոմանք:

համարել № 1973-ում արված կարգը և երկու ցանկերի համեմատությամբ կազմել աղվանից ամսանունների հետևյալ համադրական ցանկը.

Նաւասարդուն Վ - ոն Նաւասարդ, Նոր տարի»
 (հայերենի հետ՝ փոխառյալ է պարսկերենից),
 Տուլեն լիազորով, խաղողաբեր»,
 Նամոց լիսոնավության»,
 Յիլէ սերմանյաց, սերմանելու»,
 Բոկաւոն «այրեցող»,
 Բիճուկէն Վ Բոճկոնէ
 Մրելի Վ Մարէ (հմմտ. հայ. Մարերի)
 Ծախուլի Վ Ծախուլեն
 Բոնդուկէ Վ Բունդուկէ,
 Որելին.
 Եխնա «հնձոց»,
 Քիբնա «երից, երրորդ»,
 Աւելեաց:

Չորս ամսանուններ երկու ձեռագրերում տարրեր ձևեր ունեն, և, թեև վստահելի համարեցինք № 1973 ձեռագիրը, այնուամենայնիվ վերջնականորեն հնարավոր չէ որոշել նրանց ձևը՝ իմաստների անհայտ լինելու պատճառով: Ստուգաբանված ամսանունների հիման վրա հնարավոր է, գոնե մոտավորապես, որոշել, թե երբ էր սկսվում աղվանից տարին: Ընդունելով, որ երկրորդ՝ ծուլեն (լիազորաբեր)՝ ամիսը համապատասխանում է օգոստոս-սեպտեմբերին, իսկ չորրորդը՝ Յիլէ (սերմանելու)՝ հոկտեմբեր-նոյեմբերին, պետք է եզրակացնել, թե տարվա սկիզբն է եղել հուլիսի երկրորդ կեսը. այդ դեպքում միանգամայն ճիշտ կլինի նաև տասնևմեկերորդ ամսվա (Եխնա «հնձոց») տեղը, որ է՝ մայիս-հունիս. բայց, դրանց հակառակ, միանգամայն անպատեհ է հինգերորդ (Բոկաւոն «այրեցող») և տասնևերկուերորդ (Քիբնա «երրորդ») ամիսների տեղը: Գրիչնե՛րն են արդյոք շփոթել ամսանունների կարգը. դժվար է վճռել:

Վերի ստուգաբանությունների համաձայն ունենք աղվաներեն հետևյալ հինգ բառերը. 1) տուլ լիազոր», որից՝ հայ. տուլի լիազորի որթ» և գվո. դիլլա (սվդ.), դիլի, դիլլորդիլի լիազորի տերև» (հճ.), 2) ցիլ սերմ», 3) բուկ վառ», 4) եխ «հունձ», 5) խիբ «երեք»: Նաւասարդուն և Նամոց, իբրև փոխառություններ, տվյալ դեպքում արժեք չեն ներկայացնում: Այդ բառերի ստուգաբանությունը ուտիերենի օգնությամբ՝ այն եզրակացությանն է բերում մեզ, որ աղվանից և ուտիացոց լեզուները իրոք շատ ընդհանրություններ են ունեցել: